ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի՝ կայացած 20.12.2017 թ.

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

*Արմեն Մատինյանը, Արտյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը, Վահե Դոխոյանը և Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը* :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ *Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը:*

Նիստից բացակայում էին՝

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Միհրան Քոչարյանը,Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել ավագանու հերթական նիստի օրակարգը:

Կողմ՝ 20 , ձեռնպահ՝ 2 (Հայկազ Սիմիկյան և Վահե Կոռյան ), քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր: Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը*

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,

զեկ.՝ Վ.Գրիգորյան

2. «Նեցուկ ՀՋ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը «Սարտիս» ՍՊԸ-ի նվիրաբերած գումարը 2018թ.-ին օգտագործելու թույլտվություն տալու մասին,

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին,

զեկ.՝ Վ.Գրիգորյան

4. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին,

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017թվականի մարտի 31-ի «Վանաձոր համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար՝ Վ.Գրիգորյանը:

Օրակարգի և օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ ընդհանրական կարծիք արտահայտեց Քրիստ Մարուքյանը:

Զեկուցողին և նիստը վարողին հարց ուղղեցին Քրիստ Մարուքյանը, Գայանե Քալանթարյանը, Արմեն Մատինյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին հարցերին և ներկայացրեցին պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը իր կողմից առաջարկված փոփոխությունների հետ միասին:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, ընդունվեց որոշում: Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոոյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը*

2. ԼՍԵՑԻՆ - «Նեցուկ ՀՋ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը «Սարտիս» ՍՊԸ-ի նվիրաբերած գումարը 2018թ.-ին օգտագործելու թույլտվություն տալու մասին,

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար՝ Վահե Գրիգորյանը:

Նիստը վարողը լրացուցիչ տեղեկություններ ներկայացրեց հարցի նախապատմության վերաբերյալ:

Զեկուցողին հարց ուղղեց Հայկազ Սիմիկյանը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 28, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի պաշտոնակատար՝ Վահե Գրիգորյանը

Զեկուցողին հարց ուղղեցին և բյուջեի նախագծի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտեցին ավագանու անդամներ Սեյրան Ղամբարյանը, Արմեն Մատինյանը, Արտյոմ Գրիգորյանը, Գայանե Քալանթարյանը, Վահագն Ավագյանը, Արմեն Եղիազարյանը, Վահե Կոռյանը,Կարինե Ղուկասյանը, Անահիտ Կարապետյանը,

Հարցերին պատասխանեցին զեկուցողը և նիստը վարողը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 20, դեմ՝ 8 (Քրիստ Մարուքյան, Կարինե Ղուկասյան, Հրանտ Այվազյան, Հայկազ Սիմիկյան, Վահե Կոռյան, Անահիտ Կարապետյան, Արմեն Եղիազարյան, Ռոմիկ Մարգարյան) ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

- Զեկուցեց համայնքի ղեկավար, նիստը վարող Մամիկոն Ասլանյանը

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի փետրվարի 20-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 28 կողմ, ընդունվեց որոշում:

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի փետրվարի 20-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը